Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդում
08.02.2019թ.
(արձանագրություն № 7)

Վավերացնում եմ
ռեկտոր Վարդան Ուռուտյան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում և կարգավորում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի՝ ընտրության միջոցով համալրման գործընթացը,

2. Ֆակուլտետի դեկանն ընտրվում է Համալսարանի գիտական խորհրդում (այսուհետ՝ Գիտական խորհուրդ) բաց մրցույթի հիման վրա՝ փակ, գաղտնի քվեարկությամբ: Ընտրությունների արդյունքների հիման վրա ընտրված դեկանին պաշտոնի է նշանակում Համալսարանի ռեկտորը և սահմանված կարգով կնքում է պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով: Ֆակուլտետի դեկանն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի, քան երկու հնգամյա ժամկետ անընդմեջ: Դեկանի հավակնորդի տարիքը չպետք է գերազանցի 65 տարին: Դեկանի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է Գիտական խորհրդի կողմից՝ սույն կանոնակարգին համապատասխան:

3. Ֆակուլտետի դեկանը Համալսարանում վարչական այլ պաշտոն չի կարող զբաղեցնել:

4. Սույն կանոնակարգի ընդունմամբ ուժը կորցրած են ճանաչվում Համալսարանի՝ Ֆակուլտետի դեկանի ընտրությունը կարգավորող իրավական ակտերը: Եթե նմանաբնույթ իրավական ակտերը կարգավորում են նաև այլ հարաբերություններ, ապա ճանաչվում են մասնակի ուժը կորցրած:

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5. Ֆակուլտետի դեկանի ընտրության մասին հայտարարությունը ձևակերպվում է Համալսարանի ռեկտորի հրամանով, հրապարակվում է Համալսարանում և այլ տեղեկատվական հարթակներում: Հայտարարության մեջ նշվում են առնվազն՝ մրցույթի պայմանները, պաշտոնի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումների ներկայացման ժամկետը (այն է՝ հայտարարության հրապարակումից հետո 30 օրվա ընթացքում):

6. Դեկանի թափուր պաշտոնի մրցույթին կարող են մասնակցել առնվազն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձինք, որոնց տարիքը չի գերազանցում 65-ը: Ֆակուլտետի դեկանի պաշտոնին կարող են հավակնել առնվազն 5 տարվա գիտամանկավարժական ստաժ ունեցող անձինք:

7. Դեկանի պաշտոնի հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում Համալսարանին են ներկայացնում՝

1) դիմում՝ ուղղված Համալսարանի ռեկտորին,
2) անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
3) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
4) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում),
5) տեղեկանք գիտամանկավարժական ստաժի վերաբերյալ,
6) համառոտ ինքնակենսագրություն,
7) գիտական աստիճանը հավաստող փաստաթղթի պատճենը,
8) հավակնորդի գործունեության ծրագիրը (Ֆակուլտետի զարգացման հայեցակարգ):

8. Հավակնորդի դիմումը չի ընդունվում, եթե դիմումը ներկայացվել է այն ներկայացնելու համար նախատեսված ժամկետի խախտմամբ կամ լրացել է հավակնորդի 65 տարին կամ ներկայացվող փաստաթղթերը չեն համապատասխանում մրցույթի պայմաններին:

9. Ներկայացվող փաստաթղթերի անհամապատասխանության դեպքում հավակնորդը հնարավորություն ունի կրկին ներկայացնելու դիմումը և կից փաստաթղթերը՝ մինչև դիմումների ընդունման վերջնաժամկետը:

10. Ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածուների ցուցակը, որում նշվում են թեկնածուների անունները, ազգանունները և գիտական աստիճանը՝ Գիտական խորհրդի քարտուղարը, դիմումների ներկայացման վերջնաժամկետից հետո, 2 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տվյալ ֆակուլտետի գիտական խորհրդին: Դեկանի թեկնածուների անձնական գործերը եռօրյա ժամկետում քննարկվում են տվյալ ֆակուլտետի գիտական խորհրդում և ներկայացվում Համալսարանի գիտական խորհրդին՝ ընտրության

համար: Սահմանված ժամկետում Գիտական խորհրդին ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից քննարկման արդյունքները չներկայացնելու դեպքում (անկախ պատճառից) Գիտական խորհուրդը դեկանի ընտրությունը կազմակերպում է առանց ֆակուլտետի գիտական խորհրդի ներկայացման:

11. Հավակնորդը կարող է ինքնաբացարկ հայտնել մինչև Գիտական խորհրդի որոշմամբ փակ (գաղտնի) քվեարկությունը սկսելը:

12. Ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածությունների քննարկման և դեկանի ընտրության օրակարգով Գիտական խորհրդի նիստը վարում է (նախագահում է) Համալսարանի ռեկտորը կամ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը: Նիստը իրավազոր է, եթե ներկա են Գիտական խորհրդի հաստատված կազմի 2/3-ը:

13. Մինչև քվեարկություն անցկացնելը ներկայացվում են հավակնորդների ծրագրերը. հավակնորդների, նրանց ծրագրերի ներկայացման ու քննարկման աշխատակարգը հաստատում է Գիտական խորհուրդը՝ ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

14. Նախագահողն ամփոփում է քննարկումների արդյունքները և Գիտական խորհրդի անդամներին ներկայացնում քվեարկության կարգը:

15. Նախագահողի առաջարկով քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ իր կողմից ընտրում է առնվազն 3 անդամից բաղկացած հաշվիչ հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել դեկանի թափուր հաստիքում որպես թեկնածու առաջադրված անձինք:

16. Հաշվիչ հանձնաժողովն իր անդամներից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

17. Ինքնաբացարկ չհայտնած հավակնորդների անունները զետեղվում են քվեաթերթիկի մեջ: Միակ հավակնորդի վերաբերյալ քվեարկության դեպքում քվաթերթիկի մեջ պետք է լինեն «կողմ» և «դեմ» բառերը:

18. Մեկից ավելի թեկնածությունների քվեարկության համար քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով նշվում են յուրաքանչյուր թեկնածուի ազգանունը, անունը:

19. Հաշվիչ հանձնաժողովը գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամին տալիս է մեկ քվեաթերթիկ, որը ստանալիս նա ստորագրում է գիտական խորհրդի անդամացուցակում:

20. Մեկից ավելի հավակնորդների դեպքում քվեարկելիս քվեաթերթիկում թողնվում է միայն մեկ հավակնորդի անունը, որի օգտին գիտական խորհրդի անդամը քվեարկում է՝ ջնջելով մյուսների անունները, որոնց դեմ է քվեարկում: Բոլոր հավակնորդներին դեմ քվեարկելու դեպքում, Գիտական խորհրդի անդամը քվեաթերթիկում ջնջում է բոլոր հավակնորդների անունները:

21. Քվեարկությունն ավարտելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն:

22. Մեկից ավելի հավակնորդների դեպքում արձանագրության մեջ հավակնորդների ցուցակը կազմվում է ըստ հավաքած ձայների քանակի նվազման հաջորդականության:

23. Անվավեր են համարվում այն քվեաթերթիկները. որոնցում՝

1) թողնված կամ ջնջված են թե՛ «կողմ» և թե՛ «դեմ» բառերը (միակ հավակնորդի դեպքում),
2) թողնված են երկու և ավելի անուններ (մեկից ավելի հավակնորդների դեպքում),
3) քվեաթերթիկում հստակ չեն ջնջված «կողմ» և «դեմ» բառերը և անուն ազգանունները, կատարված են սույն կարգով չնախատեսված նշումներ, ընդգծումներ և այլ նշաններ:

24. Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը:

25. Միակ հավակնորդի դեպքում անձը համարվում է ընտրված, եթե նրա օգտին քվեարկել է Գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը:

26. Մեկից ավելի հավակնորդների դեպքում՝

1) ընտրված է համարվում Գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությունը հավաքած անձը,
2) որևէ հավակնորդի կողմից Գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնություն չհավաքելու դեպքում Գիտական խորհրդի նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որին մասնակցում են՝

ա) առավելագույն ձայներ ստացած առաջին երկու հավակնորդը, կամ

բ) առավելագույն ձայն ստացած առաջին հավակնորդը և նույնաքանակ ձայներ ստացած երկրորդ ու հաջորդ հավակնորդները, կամ

գ) առավելագույն և նույնաթիվ ձայներ ստացած երկու և ավելի հավակնորդները:

27. Դեկանի ընտրության արդյունքները հաստատվում են Գիտական խորհրդի նիստում:

28. Դեկանի պաշտոնում մրցույթով անցած անձի հետ Համալսարանի ռեկտորը կնքում է պայմանագիր՝ օրենքով սահմանված կարգով, մինչև 5 տարի ժամկետով: